ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 01.03.2016թ. N 1/46-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.03.2016թ. ժամը 16-00-ին, ՀՀ ՖՆ վարչական շենքում, ք. Երևան, Մ.Ադամյան-1 հասցում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Մակարյանը, Է.Գալստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու համար /01.03.2016թ. թիվ-1/18-2/7673-16 գրությամբ/ միաժամանակյա ծանուցմամբ հրավեր էր ուղարկվել՝ Ճարտարապետական արվեստանոց «ՁԱԱՐՏ» ՍՊԸ-ին, «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին և «Հաբշին Նախագիծ» ՍՊԸ-ին, ինչպես նաև հրավերը նույն օրը հրապարակել էր նաև www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:
-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
Ճարտարապետական արվեստանոց «ՁԱԱՐՏ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Մաշտոցի-16/42)
-քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:
-գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Ճարտարապետական արվեստանոց «ՁԱԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝
ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով.
բ/ բացված ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան.

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.
Ճարտարապետական արվեստանոց «ՁԱԱՐՏ» ՍՊԸ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը ՀՀ դրամ
1	ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	-	8 700 000

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝
-Ճարտարապետական արվեստանոց «ՁԱԱՐՏ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտ ներկայացրած և նիստին ներկա Ճարտարապետական արվեստանոց

«ՀԱԱՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Զուրաբյանին հրավիրեց մասնակցելու ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 74-րդ կետի 1-ին ենթակետի զ/ կետի պայմաններով բանակցությունների:

-Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին Ճարտարապետական արվեստանոց «ՀԱԱՐՏ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկը թողեց անփոփոխ:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1.Ներկայացված հայտի հիման վրա և հաշվի առնելով, որ հիշյալ գնման ընթացակարգին Ճարտարապետական արվեստանոց «ՀԱԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ Ճարտարապետական արվեստանոց «ՀԱԱՐՏ» ՍՊԸ-ին հայտարարել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

2. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հրավերի 2.1 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյան

Անդամներ՝ Հ.Մակարյան

Է.Գալստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան